ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ.ՏՈՒՄԱՆՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13-ը հուլիսի 2021թ. N 195

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԳԵՎԱՇԵՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի , 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1.Ճանաչել Անյուտա Պետրոսի Համբարձումյանի սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող՝ 0.3205 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.09.1991 թվականի թիվ 9 որոշմամբ) քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային, կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը:

2. Փոփոխել 07-006-0037-0002-ից կադաստրային ծածկագրի տակ գտնվող 320.5 քառակուսի մետր այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը, որպես բնակելի կառուցապատման հողամաս:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 2-րդ թաղամաս, թիվ 2/2 հասցե**:

5. Անյուտա Պետրոսի Համբարձումյանի սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 2-րդ թաղամասի թիվ 2/2 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 61.38 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 11.89 քառակուսի մետր արտաքին մակերեսով պահեստը, 7.68քառակուսի մետր արտաքին ծածկոցը, 14.07 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական:

6. Անյուտա Պետրոսի Համբարձումյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 95.02 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 220067 (երկու հարյուր քսան հազար վաթսունյոթ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անյուտա Պետրոսի Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Գ.Մաթևոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14-ը հուլիսի 2021 թ. N 196
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Լերի Մալյանցին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 2051413/ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ 0.045 հա մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Այգեգործական թաղամաս, թիվ 18 հասցե:

**Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 հուլիսի 2021 թ. N 197

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Կարեն Հակոբի Ղազարյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Պ. Սևակի թաղամասի 3-րդ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան և պարսպապատման կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 Հուլիսի 2021թվականի N 198

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<Նորմատիվ իրավականակտերի մասին> օրենքի 33-րդհոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2021 թվականի հուլիսի 02-ի N 229-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի ղեկավարի 22-ը նոյեմբերի 2016 թվականի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 238 որոշման մեջ «Սևակ Տիգրանյան» բառերը փոխարինել «Միեր Գևորգյան» բառերով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար** ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2021թ. Հուլիս 14
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 199**

14-ը Հուլիսի 2021թ.
Ք. Նոր Հաճն

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 40-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի ամառային զորակոչի շրջանակներում, թվով 40 զորակոչիկի ծառայության անցնելու կապակցությամբ համայնքի 2021 թվականի բյուջեի գործառական դասակարգման 02.05.01 <Զորակոչի կազմակերպմանն աջակցության> հատվածի 4269 <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածից հատկացնել 150000 դրամ:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սմբատյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

14-ը Հուլիսի 2021թ
Ք.Նոր Հաճն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 200

21-ը Հուլիսի 2021թ.
Ք. Նոր Հաճն

### ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-ՐԴ ԹՂԱՄԱՍԻ 5 - ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 27 ՀԱՍՑԵԻ 07-006-0013-0202 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 138.6 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Հողային օրենսգրքի» 67-70-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 08-ի թիվ 22-Ա որոշումը և 2021 թվականի հուլիսի 21-ին կայացած հողի լոտ 3 աճուրդի N 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Հաճն համայնքի Ս.Ջուլֆյան 2 թաղամաս 5-րդ փողոց թիվ 27 հասցի 07-006-0013-0202 ծածկագրի տակ գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 138.6 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքը 994595 (ինը հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր իննունհինգ) դրամ գումարով օտարել (վաճառել) աճուրդում հաղթող ճանաչված Վոլոդյա Ռաֆիկի Ներսեսյանին ՝/ Անձնագիր AT0514538՝ տրված 20.07.2020թ. 099-ից / նրան տալով ճարտարապետանախագծային առաջադրանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

21-ը Հուլիսի 2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2021 թ. N 201

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով ՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Արփինե Արայի Հայրապետյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Անդրանիկի փողոցի թիվ 7/5 հասցեում գտնվող խանութի վերակառուցման և ընդլայման կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22-ը հուլիսի 2021 թ. N 202

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման , 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոփոխելու Նաիրա Շալիկոյի Պողոսյանի պատկանող Նոր Հաճն համայնքի Գայի փողոցի թիվ 6/9 հասցեի, 07-006-0030-0025 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.01 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրա Շալիկոյի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը հուլիսի 2021թ. N 203
Նոր Հաճն

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասով և 56-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն և 2006 թվականի հունվարի 19-ի թիվ 139-Ն որոշումների, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 49-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականության իրավունքով պատկանող 07-006-0030-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.00184 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ հասարակական կառուցապատման նշանակության:
2. Նոր Հաճն համայնքի սեփականության իրավունքով պատկանող 07-006-0030-0001-ից ծածկագրի տակ գտնվող հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքից առանձնացնել 0.00184 հա հողատարածք:
3. Առաջացած հողատարածքը հասցեավորել որպես ***Գայի փողոց թիվ 6/1/1 հողամաս***:
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության և հողօգտագործման հարցերով գլխավոր մասնագետ Գրիգոր Հալլաբյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան**

ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 03301132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 p. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

22-ը հուլիսի 2021 թ. N 204
Նոր Հաճն

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ և հիմք ընդունելով Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանի դիմումը ՝ ***որոշում եմ՝***

1. Նոր Հաճն համայնքի Ազատամարտիկների փողոցում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0011-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.00064 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնակամ կառուցված 6.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով տաղավարի մասը համարել Նոր Հաճն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական: 07-006-0011-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.00064 հա բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման նշանակության:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.
3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :
4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Հաճն համայնք, **Ազատամարտիկների փողոց, թիվ 3/3**:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանին ՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ.Մաթևոսյան**

03301132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը հուլիսի 2021 թ. N 205

## ՅՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Յուրիկ Խաչատուրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.05.1992 թվականի թիվ 5 որոշմամբ) 0.05 հա ընդհանուր մակերեսով, 07-006-0041-0046-ից կադաստրային ծածկագրի տակ գտնվող այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման նշանակության:
2. Յուրիկ Խաչատուրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման նշանակության հողամասին տրամադրել հասցե՝

**- Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 1-ին թաղամաս, 1-ին փողոց թիվ 7 հասցե:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Յուրիկ Խաչատուրի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

ՆՈՐ ՀԱՃՆ ... * 03301132 *

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը հուլիսի 2021 թ.N 206

### ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արա Երեմի Ամիրջանյանի դիմումը՝ իրեն կառուցապատման իրավունքով պատկանող հողամասի պայմանագիրը լուծելու մասին՝ ***որոշում եմ.***

1. Վաղաժամկետ լուծել Արա Երեմի Ամիրջանյանի հետ կնքված Տոռոզյան փողոցի թիվ 26/2 հասցեի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 21072021-07-0055, տրված 21.07.2021 թ./ 0.008 հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կառուցապատման պայմանագիրը։

2. Լիազորել Նոր Հաճնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերով գլխավոր մասնագետ Գրիգոր Հալլաբյանին սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման պայմանագիրը լուծելու համար հանդես գալու Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակում։

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 03301132 *

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը հուլիսի 2021թ. N 207
Նոր Հաճն

### ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՌՈՋՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Քաղաքաշինության մասին օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, Նոր Հաճն համայքի ավագանու 2013 թվականի հուլիսի 1-ի N 17-Ն որոշմամբ , որով հաստատված է նշված հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը, որը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմ, շինությունը վերակառուցվել է 2021 թվականին, փոխվել է արտաքին չափսերը և տեսքը, որի օրինականացման պահանջները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի 912-Ն որոշման պահանջներով,շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին, և հիմք ընդունելով Արա Երեմի Ամիրջանյանի դիմումը՝ ***որոշում եմ՝***

1. Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0012-0012 ծածկագրի տակ գտնվող 0.009 հա հողամասում ինքնակամ կառուցված 90.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նշանակության բնակելի տունը համարել Նոր Հաճն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

2.1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2.2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

2.3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :

5. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Հաճն համայնք, Տոռոզյան փողոց թիվ 26/2:

6. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

7. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Արա Երեմի Ամիրջանյանին ՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը ձեռքբերման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ.Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը հուլիսի 2021 թ. N 208

### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման , 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոփոխելու Վրեժ Ռաֆիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Ազատամարտիկների փողոցի թիվ 1/3 հասցեի, 07-006-0012-0051 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.00609 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վրեժ Ռաֆիկի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 Հուլիսի 2021թվականի N 209

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4- ի N526 -Ն որոշման 4- րդ գլխի 16- րդ կետի պահանջների **որոշում եմ.**

1. Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 02- ի <<2021 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> N 22 - որոշման հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ (հավելվածը կցվում է):

**2.** Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Հուլիս 26
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 Հուլիսի 2021թվականի N 210

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվկանի օգոստոսի 3- ի N920 –Ն որոշմամբ,հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը **որոշում եմ.**

1.Նոր Հաճն համայնքի 2021 թվկանի բյուջեից վերադարձնել փոխադրամիջոցի մասով առաջացած գերավճարները՝ համաձայն հավելվածի(հավելվածը կցվում է):

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել վճարումը՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, ֆինանսական,եկամուտների հարցերով Խ. Թարվերդյանին գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Հուլիս 27
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021թ.-ի հուլիսի 27-ի
N 210 որոշման

# Ց Ա Ն Կ

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁԻ

| Հ/Հ | Անուն,Հայրանուն, Ազգանուն | Անձնագրային տվյալներ | Գույքահարկ | Բանկ և h/h | Վերադարձվող գումարի չափը՝դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ավագիմյան Արմեն Յաշարի | Անձ. AN0377408 տրված 20.02.2013թ 058-ից | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | Կոնվերսբանկ ՓԲԸ 19300765874600 | 4540 / չորս հազար հինգ հարյուր քառասուն / |
| 2 | Վարդան Դալլաքյան Ռաֆիկի | ՆՔ005477864 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | Կոնվերսբանկ ՓԲԸ 1930004593080200 | 3750 /երեք հազար յոթ հարյուր հիսուն / |

Համայնքի ղեկավար Գ. Մաքևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 211

28-ը հուլիսի 2021թ.
ք. Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Վարազդատ Մկրտչյան* ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքիՉարենցի 21/17 հասցեի տարածքում գտնվող 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ № 9225, 9226 անդորրագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Վարազդատ Մկրտչյան ԱՁ-ին* (վկայական80.1025855) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 15 հասցեի տարածքում գտնվող 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 03301132

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐՀԱՃՆ<ՏՈՒՌԱՅՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 212

28-ը հուլիսի 2021թ.
ք. Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Քոռլ Շայն ՍՊԸ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 9/1 հասցեի տարածքում գտնվող 420ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 9211, 9212 անդորրագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ,***

1.Տալ *Քոռլ Շայն ՍՊԸ-ին* (վկայական N80.110.01121) Նոր Հաճն համայնքի Չարենցի 9/1 հասցեի տարածքում գտնվող 420ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 213

28-ը հուլիսի 2021թ
Ք. Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Անի Պետրոսյան ԱՁ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 16/8 հասցեումգտնվողմինչև 26ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 9240 անդորրագրի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Անի Պետրոսյան ԱՁ-ին* (վկայական 80.1085358) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 16/8 հասցեում գտնվող 26ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպմանև իրականացման թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել՝ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը հուլիսի 2021 թ. N 214

### ՅՈՒՆԱՇԱ ՄԱՆՎԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Յունաշա Մանվելի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.05.1992 թվականի թիվ 5 որոշմամբ) 0.08 հա ընդհանուր մակերեսով, 07-006-0015-0001-ից կադաստրային ծածկագրի տակ գտնվող այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման նշանակության:
2. Յունաշա Մանվելի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման նշանակության հողամասին տրամադրել հասցե՝

**- Նոր Հաճն համայնք,Պարգևաշեն 4-րդ թաղամաս, 2-րդ փողոց թիվ 36 հասցե:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Յունաշա Մանվելի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

28 հուլիսի 2021 թվականի N 215

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Անդրանիկի փողոցի 4-րդ շենքի 37-րդ բնակարանի բնակիչ Ռոման Սուրենի Գևորգյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Ռոման Սուրենի Գևորգյանին, հոր՝ Սուրեն Սոսի Գևորգյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

28.07.2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը հուլիսի 2021թ. N 216
Նոր Հաճն

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Նոր Հաճն համայնքին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Գայի փողոցի թիվ 6 հասցեում գտնվող (հիմքը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը 16082019-07-0087) և Գայի փողոցի թիվ 6/1/1 հասցեում գտնվող (հիմքը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը 28072021-07-0136) հողամասերը միավորելով՝ տրամադրել միասնական հասցե.

- Նոր Հաճն համայնք, Գայի փողոց թիվ 6 հասցե:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 03301132 *

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՑՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

29-ը հուլիսի 2021 թ. N 217

### ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

**1.** Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 29-ի N 29072021-07-0105 վկայական) Ազատամարտիկների փողոցի թիվ 3/3 հասցեում գտնվող 6.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով տաղավարի մասը (ներքին՝ 5.5 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.00064 հա մակերեսով, 07-006-0011-0068 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, հասարակական կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանին:

**2.** Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) տաղավարի 1 քառակուսի մետրի համար՝ 20844 (քսան հազար ութ հարյուր քառասունչորս) դրամ

3.2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 6834.3 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս ամբողջ երեք) դրամ:

4. Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 133402 (մեկ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր երկու) դրամ՝ տաղավարի գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 43740 (քառասուներեք հազար յոթ հարյուր քառասուն) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոֆյա Ֆիրդուսի Գրիգորյանի որոշման ընդունման մասին իրազեկվելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Գ.Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

02-ը օգոստոսի 2021 թ. N 218

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՈՌՈՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

**1.** Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 30-ի N 30072021-07-0170 վկայական) Տոռոզյան փողոցի թիվ 26/2 հասցեում գտնվող 90.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին՝ 73.18 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.009 հա մակերեսով, 07-006-0012-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Արա Երեմի Ամիրջանյանին:

**2.** Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար՝ 6948 (վեց հազար ինը հարյուր քառասունութ) դրամ

3.2) առանձնացված հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 6834.3 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս ամբողջ երեք) դրամ:

4. Արա Երեմի Ամիրջանյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 625320 (վեց հարյուր քսանհինգ հազար երեք հարյուր քսան) դրամ՝ բնակելի տան գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 615087 (վեց հարյուր տասնհինգ հազար ութսունյոթ) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արա Երեմի Ամիրջանյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արա Երեմի Ամիրջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Մաթևոսյան

03301132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը օգոստոսի 2021թ. N 219
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Բաբկեն Ռուբիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.06 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավարևելյան թաղամաս, 13-րդ փողոց թիվ 18 հողամաս:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՑՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը օգոստոսի 2021թ. N 220
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Ամալյա Ազատի Շեգունցին սեփականության իրավունքով պատկանող, 0.04 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավարևելյան թաղամաս, 14-րդ փողոց թիվ 18 հողամաս:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 Օգոստոսի 2021թվականի N 221

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվկանի օգոստոսի 3- ի N920 –Ն որոշմամբ,հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը որոշում եմ.

1.Նոր Հաճն համայնքի 2021 թվականի բյուջեից Վանիկ Քաթանյանին վերադարձնել փոխադրամիջոցի մասով առաջացած գերավճարը՝ 4540 դրամ:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել վճարումը:

3.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, ֆինանսական,եկամուտների հարցերով Խ. Թարվերդյանին գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Օգոստոսի 02
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ N 222

02-ը Օգոստոս 2021թ.
Ք. Նոր Հաճն

## ՍՓՅՈՒՌՔԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Օգոստոսի 02-ի՝ ԱՄՆ – ից Հայաստան ժամանած սփյուռքի հաճընցիների ժառանգների՝ Արմեն և Լաուրա Արսլանյանների գլխավորած պատվիրակության ընդունելությունը բարձր մակարդակով կազմակերպման համար համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4237 <Ներկայացուցչական ծախսեր> հոդվածից հատկացնել 54000 դրամ:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանի ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

02.08.2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

04 օգոստոսի 2021 թվականի N 223

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Չարենցի փողոցի 17-րդ շենքի 10-րդ բնակարանի բնակիչ Լադիկ Շբոյի Մուրադյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Լադիկ Շբոյի Մուրադյանին, քրոջ՝ Կարինե Շբոյի Մուրադյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան

04.08.2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2021 թվականի N 224

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000 ( հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշյալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

05.08.2021թ.
ք. Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի օգոստոսի 5-ի N 224 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Գումարի չափը՝ դրամ |
|---|---|---|
| 1. | Սանուհի Յորդանյան | 70000 |
| 2. | Հրանտ Բարսեղյան | 70000 |

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05-ը օգոստոսի 2021 թ. N 225
Նոր Հաճն

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Մարտիկ,Լիդա,լուսինե,Ատոմ Փիլոսյաններին և Մարիետա Մեսրոպյանին տալ բնակելի տան շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Հարավարևելյան թաղամասի,4-րդ փողոցի թիվ 4 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 p. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2021 թվականի N 226

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ՍԵԴԱ ԿԱՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Չարենցի փողոցի 1-ին շենքի 6-րդ բնակարանի բնակիչ Սեդրակ Ժորժիկի Մանուկյանի /ծնված՝ 22.10.1976թ./ դիմումը /մուտք՝ N 540 05.08.2021թ./ և Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակի կողմից 2021թ. հուլիսի 26-ին տրված 77АГ7457960 լիազորագիրը՝ անչափահաս Սեդա Կարենի Հարությունյանին /ծնված՝ 11.05.2004թ./ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 7-րդ փողոցի թիվ 17 շինությունների 1/2 բաժնեմասի վաճառքի թույլտվություն տալու մասին, հաշվի առնելով Նոր Հաճնի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 6-ի թիվ 06 նիստի արձանագրությունը և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի և 321-րդ հոդվածի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-5-րդ մասերի պահանջներով ***որոշում եմ.***

***1.*** *Թույլատրել* անչափահաս Սեդա Կարենի Հարությունյանին, հաշվառված ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Սպորտային փողոցի 1-ին շենքի 21-րդ հասցեում, գործելով իր մոր՝ Հասմիկ Վազգենի Հարությունյանի համաձայնությամբ, վաճառելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 7-րդ փողոցի թիվ 17 շինությունների՝ իրեն պատկանող 1/2 բաժնեմասը, ինչպես նաև Սեդա Կարենի Հարությունյանի օրինական ներկայացուցիչ մոր՝ Հասմիկ Վազգենի Հարությունյանի համաձայնությամբ, լիազորել քաղաքացի Սեդրակ Ժորժիկի Մանուկյանին վաճառելու անշարժ գույքի անչափահասին պատկանող 1/2 բաժնեմասը՝ իրեն հարմար գնով և պայմաններով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սեդրակ Ժորժիկի Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-ը օգոստոսի 2021 թ. N 227
Նոր Հաճն

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Մանե Հայկի Կարապետյանին տալ բնակելի տան շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Ս. Ջուլֆյան 2-րդ թաղամասի,1-ին փողոցի թիվ 6 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**